կարող են գործ դնուիլ մի այլ նպատակայարմար ազգօգուտ հիմնարկութեան վրա ի յիշատակ մեր հանգուցեալ եղբօր և հօր Թադէոս Ա. քահանայի։

,, Վերոյ բացատրեալ հիմնական կէտերը յայտնելով Ձեր Դերապատուութեանն՝ ամենախոնարհաբար խնդրումենք բարեհաճել շուտափոյթ կարգադրութիւն անել այս մեր խնդիրը հանդերձ նորաբանալի Բուդաղեան վանական դպրոցի կանոնադրութեամբ և ծրագրով առաջարկել ի հաստատութիւն Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց, որպէս զի այս առաջիկայ ուսումնական տարուայ սկիզբիցը ձեռնարկուի նոյն դպրոցի բացմանը։

,, Մովսէս Բուդաղեանց, Եղիայ Դ. Բուդաղեանց, Ենովք Դալստեան Բուդաղեանց, Սմբատ Բուդաղեանց և Երուանդ Բուդաղեանց.

ի 25 յունվարի 1888 ամի

ի Ք. Բաղու»։

Խոստմնագրի ստացման մասին ապահովացրի Բուդաղեան եղբարց գրութեամբս յ30 յունվարի հմ. 40, որ ըստ այսմ։

,, Մեծապատիւ ազգասէր պարոնայք եղբարք Բուդաղեանք պ. պ. Մովսէս, Եղիա, Ենովք, Սմբատ, և Երուանդ։

Հմ. 10 յ30 յունվ. 1888 ի Ք. Ղամախի

,, Բերկրութեամբ հոգւոյ և կատարեալ բաւականութեամբ սրտի ստացայ Ձեր ազգասիրութեան պատրաստած և ուղարկած օրինաւոր խոստումները -ի 25 ամսոյս գրած- և կարդալով զայն ամենայն ուշադրութեամբ հաւան գտայ կանոնադրութեան համար Ձեր կողմից աւելացրած յօդուածոց բովանդակութիւնը, ուստի և կարելին փութով պատրաստելով կանոնկանոնադրութեան և ուսման ծրագիրն՝ նոյն իսկ Ձեր խոստմնագրոյ հետ յայտարարութեամբս կ'ուղարկեմ ի հաստատութիւն Վեհ. Կաթողիկոսի ազգիս, որպէս զի՝ յառաջիկայ ուսումնական տարեգլխից (սեպտ. 1888,) սկսինք բանալ դպրոցը և շարունակել ուսումն։